

Փարիզի մէջ հաստատուեցաւ մէկ ընկերութիւն մըն ալ որուն վախճանն է հրատարակել երեւելի մարդկանց վարքը ու պատկերը, որոնք ինչ և իցէ երկրէ ալ ըլլալով՝ բարերարութիւն մը բրած են հասարակաց :

Ի՞նչ ընկերութիւնը կը հրատարակէ ամէն ամիս՝ երկու պատկերով մէյմէկ տետրակ, որ ան երեւելի մարդկանց վրայ պատմական տեղեկութիւն կուտան : Ինկերագրութեան մասնէլ ուղղը՝ տարին եօթը ֆրանք կը վճարէ, անդամ կ'ըլլայ ընկերութե, ու պղնձէ միտալ մը կ'առնէ : Ով ալ որ տասուերկու հատ ընկերութե գրուող կը գտնէ, նոյնպէս պղնձէ միտալ մը կ'առնէ . և հիմա տասնըվեց հազար ընկեր գրուողէն աւելի կայ : Իսկ ով որ քսան հատ նոր ընկեր գտնէ, արծրթէ միտալ մը կ'ընդունի . ասկէ զատ՝ Սոնթիոնի պէս աս ընկերութիւնն ալ ոսկի միտալ մը կը բաժնէ անոնց որ երեւելի եղած են մեծամեծ մարդասիրական գործքերու մէջ : Ի՞նչ ընկերութիւնը նոր ու գեղեցիկ կարգաւորութիւն մըն ալ բրաւ . այսինքն թէ քննութիւն ըլլուի ան գրուածքներուն՝ որոնք որ ընտիր բարոյական սկզբանց վրայ գրուած ըլլալով՝ Սոնթիոնի վարձատրութիւնը առեր են : Իարերարաց պատկերները կը բաժնուին ամէն տեղ, աղքատներու, գեղացիներու, արհեստաւորներու և առհասարակ ամէն վիճակի մարդու . և ամէն մէկ պատկերին հետ համառօտ ծանօթութիւն մը . որով նաև խիստ անհոգներուն սրտին մէջ ալ փափաք մը կը մտնէ՝ որ իմանան ան բարերարաց պատմութիւնը ու յորդորուին հեռեւող ըլլալու : Սոնթիոնի ընկերութեան բաժնածոսկի միտալը մինակ Վաղղիացւոյ չտրուիր, այլ նաև ամէն մարդկանց՝ որոնք մեծ առաքիչութեամբ մը երեւելի եղած են, կամ օգտակար ու գովելի գործք մը բրած են մարդկութեան :

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ՄԵՏ ՎԱՍԱԿԱՅ

ԵՒ

ՆԱՏԱՏԱԳՈՒԹԻՒՆ ՂԵՒՈՆԴԵԱՅ

Ձ

ՏԵՐՈՒՐ 'ի ծագս յիշատակաց և բնութեան Ուր ծիծաղկոտ երբէք երկինք չըպարզին, Գարշապարաց մահուն արձակ ճեմարան, Որպէս գայլ ժանտ զանմեղութիւն գողունի, Յանչէնս վարեալ 'ի բառաչիւն ըսպանդին Լացուցանէ զանբաւութիւնս ամայի :

Սաստ մուլութեան առեալ հասոյց պարսկագէն Զհայոց մեծաց սուրբ օծութիւնն 'ի կոճեղս, Մըթնէլ զարփին աշխարհայոյս յեղը անչէն : Այլ ընդ գաւառս մահուն 'ի տիպ անմահից Ընդ առապարս, ընդ հուր ընդ սուր և ընդ գեղս Նոքա սլացեալ գնային գիմք չընծալից :

Ընդ անդամատակս արեւելից լուսադէմ 'ի տես անտես խաչին որ յամպ ծածանէր Սուրբ ալեորն հորդեալ Ղևոնդ ճոխաճեմ փութայր 'ի հող հանգուցանել ըզճակատ, Եւ ընդ նրմա յորդորք ընկեր առ ընկեր հարցանելով ըզՎաղէմին զառադատս . . .

Աթոռք արկան յարկնրուռ զամայւոյ, Անբծութիւնք զուարթութիւնք 'ի գառ մատուցան . խայտայր գատեալն, յուզէր դատողն 'ի յոգւոյ . Զմոխրոյ և հրոյ վրէժ պահանջէր, ով ամօթ, Եւ զաշխարհի որում կացին քաջ պաշտպան, Եւ մերկանայր զյիմարութեան գէմս աղօտ :

Չտեսն եթեր վեհ քան զհանդէսն ընդ իւրեալ, Եւ ոչ վրսեմերէք լուան վայրք բարբառ, Իբրև Ղևոնդ 'ի պատասխանարն մատեալ : Որպէս որոտք շանթից 'ի ծով նաւակուր 'ի վայր 'ի վեր բաղնեալ մըրցին ընդ իրար, Սիրտ Գեհապհոյ ճընչեալ մանրէր 'ի մաղձն իւր :

« Հարցեալ բազում անգամ լուար և 'ի մէնջ .

« Փորձես դարձեալ, լուիցեն Արիք զայս վերջին .

« Ամենեցուն մեր մի է բան, մի է տենչ .

« Ճշմարտութեան քարոզք 'ի տղայ հասակէս

« Սուտ պաշտամանցդ ատեցողք, գից և կրակին,

« Հատեալ կամք յեղր յոր ընթացաք զուգապէս :

« Հովիւք, 'ի սէր հօտին զանձինս եղաք դրաւ,

« Եւ վասնելոցն 'ի ձէնջ խաշանց եկաք շուրջ,

« Որինչ յօտարս հասաք յերկիր գիմագրաւ .

« Սակայն ըզձիւք սըրտից ու 'ի սէր աննրկուն

« Ձայն 'ի լանջացս այս, ո՞ Պարսկէք, ձայն անմուռն :

« Հընչէ 'ի սիրտ հայաստանեայց մեր 'ի տուն .

« Հըսկել ազգիս են մեզ հրամանք յածուստ,

« Զինչ քան ծուլալ զբժպէ՛ն գործ ապառու՛մ,

« Քանի՛ յանշուշտն ինքնին վարել 'ի կորուստ,

« Ըզցանկալին ժողովրդեան սէրն արդար

« Զուգեալ 'ի սէր տեառն և կրօնիցս յանպատում,

« Անգատապարտք խղճիւ, գատիմք իբրու չար :

« Ոչ ևս տեսիլ վայրավատին մեր հօտիս

« Ի գութ յուզեալ ընտրել ընդ կեանս և ընդ մահ

« Յերկուս ըզսէրն բաժանէ 'ի հոգիս .

« Օտարայեալք ձեզք մերձեցաք յայն գաւառ



« Որ տենչանք յերկար եկաք յողբ և յահ :

« Արդ անարգել փութամբ 'ի բնիկ մեր դադար :

« Բռնացալք տեսարք գոլով, տարաք որչափ սիրտ

« Տանի առանց նըւաստութեան բերեալ կեղտ ,

« Զի այս է յոյս առաքինեաց աներկմիտ .

« Զոր ոչ զանայք ըզնոյն խընդրեմք արդ փութով ,

« Զմաշեալ կենացս հանգոյց կրարել 'ի սուր հեշտ ,

« Զի ծարաւիք անմահութեան եմք քրնով . . .

« Ահա վարդան , վահան , խորէն , Գարեգին ,

« Կրկին պսակօք կրկին սիրով մըշտայաղծ

« Յանապատէս բանան շաւիղ մեզ յերկին . . .

« Առ ձեզ ձեպիմք առաքինիքդ անձկալից ,

« Ի պսակողէն խընդրել զերկրին մերոյ զբաղդ ,

« Ճենճերեւոյդք 'ի սէր փրկչին և հօտից » . . .

Որպէս մըզձկուտ մըրրիկ 'ի մռայլ խորոփեաց

Ընդ հանգարտիկ խաղ զեփիւռից յաչաղկոտ

Յանկարծահաս խռովէ զբոսանս տարերաց .

Կամ տատարկաց մենաւորաց մնչելոց

Դարանակալ բաղէն ժանեօք մահահոտ

Բգբաղորիկ լոյսն և զձայն կըտրէ քաղցր 'ի կոծ ,

Ոչ ևս ժուժեալ աստուածախօս մերոց հարց

Դըժոխաղէնք Պարսից գէնին վրիժառու

Ընդոտս վազեալ ձօժ տան սայրից սուսերաց

Եւ իբրու զմայրս հովանաւորս արօտին

Ոյց ոչ յաղթեաց եւրոս , տապարն հար հատու ,

Զեռն 'ի ձեռն անդ տարածին վեհքն 'ի գետին :

Իւրաքանչիւր խօսի 'նդ հոգւոյն առ շըրթունս ,

Զանծախ մարմինն հըրով սիրոյն 'ի հող արդ

Ինքնին հրաւէր կարգայ նընջեքաղցրաբընս .

Սուրն և սիրտ զոյգ թընդաց , և ուշն հեզաձայն

Բեկ իբրու քնար ըզլարս յերգոյն 'ի յաւարտ .

Երկըրպագօք հոգւոյն իրանք անդ անկան . . .

Այլ զինչ յերեսս անգուստ դաշտին առապար

Սըրաւարեալ տեսանիցէք փայլունակ

Ծիրանեգոյն զհետ իւր թողով ձանապարհ : —

Դեռ անվըրդով յորսայս վարի ընդ գետին

Հայաստանեայց սուրբ արութեանն հեղինակ

Նըկատելով զոգիս եղբարցն 'ի յերկին .

Եւ իբր յետին գոհար յուր մանեկի

Զհետ վեհազանցն և օծելոց զորս 'ի սէր

Աստուածութեան և իրաւանց հայրենի

Սընեալն 'ի նոյնս 'ի Գրիգորեան վարժարանս՝

Ի տաճարի ու 'ի ճակատու բոբբոբէր ,

Զըւարթ գիմք գայր բոլորել վեհն 'ի հարս .

Եւ զմեծ հոգին զմաստուութեամբ պատարուն

Զարութեամբ լին և ըզլըցեալն Աստուծով

Ուղղեալ շընչով մեծաւ ընդ հետըս սիրոյն ,

Թեօքն անբաւ պարածածկեր և զերկին

Եւ զԱյրարատ 'ի բազմամեայն իւր վըրդով ,

Եւ ահաբեկ սարսէր ըգբէչ պարսկային :

Ի

ԱՍՏՈՒԾԱՅԵՐԵԱԼ 'ի տես հոգւոյն հրաշացեալք

Մարմնոցն 'ի վեժ՝ դաք անմահից լուսափայլք

Իշխանական աչք հրաման տան տարերց

Մի՛ զայն յաւար մասնել Պարսից և անգեղց :

Ոմն 'ի Ծովէն ձըգեալ տարափ ուռուցիկ ,

Ոմն 'ի Մասեաց վըհէն կայծակն և շանթիք ,

Եւ խաւարաւ մըրրեալ յունիցն յօդս 'ի վեր

Տարածանէ անդ թընամթոյր ամպ մըթեր .

Եւ փութորկեալ այլ ոք մըրրիկ առ մըրրիկ

Փըշէ 'ի դէմս պահապանաքն պարսիկ ,

Եւ շանթեւանդն առեալ միւսոյն կայծ վըթխար

Բոցածաւալ վառէ զայերս վեր 'ի վայր ,

Յերկայնաձիգ յորոտս 'ի ճայթ ու 'ի բոմբին

Զկայծակնացայտ ձօճեցուցեալ նետ հըրոյն ,

Եւ յամպրոպաց լայնապատառ 'ի կողից

Անվերջ տեղան տարափք ահեղք և հրալից .

Դըրդին տարերք վայրացն յահուր իբրու ծով ,

Սարսել սուրալ ժայռից բըրոց խուճապով ,

Եւ իբր արք յիրար բաղխին , հարուստ վեմք ,

Եւ ուրուատիւ ջուր հալածին պարսկագէմք ,

Մինչև յանգարձ փախուստ անկեալ 'ի բացէ

Հաղիւ զկասեալ ոգիս կլանել յերկեղէ . . .

Լըռեն տարերք . խաղաղութիւն իջեալ գայ . . .

Եւ հանգարտի բնութիւն . դին սուրբ ժրպիտ տայ .

Մինչև անբիծ մատուցէ քաղէն ըզմարմինս ,

Գանձեն 'ի հող 'ի պահ հոգւոյն 'ի յերկինս .

Եւ ոսկրոտին հիմն աստուածեան տաճարաց

Ընծայ կաղմի հայրենասէր որգեկաց ,

Ոյց յարտասուս գըթոյն անգէն ու 'ի համբոյր

Խըզին չըզթայք , Արամ դառնայ 'ի տուն իւր :

Այլ ձեզ , քնարանք խաղաղականք յամային ,

Հէնք գիշերոյ բորեանք առիւծք չըմերձին ,

Զի լուսաթուրէ արծուի հոգւոյ Երիցուն

Սաւառնաձայն թեւածէ սակալ առ մոխրոյն .

Անդ և Ոգին Հայաստանեայց զուարթուն մեծ

Մասեաց սարէն ըստէպ թուրեալ սիրայեղց ,

Ի ցօլս արեանցն որ անմահից յայանին դեռ

Հուր արտասուս խառնեալ գոչէ ընդ եթեր .

« Ամենազօր մեծդ Աստուած ,

Որ գըթութեամբ միշտ հայիս

Յորդիս քո յաղգ հողածնաց

Ի նորոգել զգէմս երկրիս ,

Աստ ուր լըռեաց քոյն Քարող ,

Իմ ըզեղուն առեալ պերճ՝

Յորմէ հեղան մեղրահոս

Ցօղ քո սիրոյդ և ընկերց ,

Յիշեցուցեալ և կարգամ՝

Զյաւիտենից քոյին ուխտ ,

Զերկիր որ ծնաւ քեզ զՎ. դամ՝

Մի՛ հէգ թողուլ և պանդուխտ :

Մի՛ զսրբութեան քո կընիք

Գազանագէմքն և գազան

Կոխեալ եղծեալ և 'ի չիք

Դիցեն չարի ձեմարան :

Այլ շունչ զոր քեզ երկրիս հարք

Եւ հարց համհարգք շընչեցին ,

Տըգիտութեան տընորորակ

Հերձեալ ըգբօղ թորգոմին ,

Իջէ և այժմ 'ի հոգւոց

Որ կան զքոյին աթոռով ,

Եւ փայլեցեն դէմք որդւոց

Հայրենական ջինջ կընքով :

Ճըմարտութեան սուրբ ճաճանչ

Զոր ջերմն արեան ճապաղեօք

Նոքա ստացան քաջալանջ ,

Իմ ջահեպէ արդ լալեօք :

Թե՛ ծիրանի և բեհեզ

Զվերս չըպատէ վտարանգին ,

Ի մի ուրար պատեսցես

Դու զհայաստան քո զորդին :

Զայս քեզ ընկերքն և Երէց ,

Զայս ճապաղք անմեղաց

Ուանձինք մաշեալք զայս ուղերձ

Յիշմամբ կըրկին հայրենեաց :